ՆՈՐ-ԴԱՐ

№ 172 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Հինգշաբթի 25 Հոկտեմբերի **1884** Հինգշաբթի 25 Հոկտեմբերի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 172

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Համարը՝ 5 կոպէկ:
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ"
կամ՝ Tiflis, Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով:
Յայտարարութեան վճարը բառին 2 կ. ռեկլամների համար՝ կրկնապատիկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր մամուլի դրութեան առթիւ:

Քրոնիկոն.—Լուրեր:

Թղթակցութիւններ.—Սուրբ Խաչ քաղաքից, Շուշուց և Վանից:

Քաղաքական.—Լուրեր:

Խառն լուրեր:

Հեռագիրներ:

Յայտարարութիւններ:

ԱԶԴ.

Այն յարգելի բաժանորդներից, որոնք յունվարին պարտաւոր էին վճարել թերթի բաժանորդագինը, խնդրում ենք այս հոկտեմբեր ամսին բարեհաճեն ուղարկել իրենց վերայ մնացած ապառիկները:

Հաւատացնում ենք, որ ձրի խմբագրութեանը ոչինչ չէ տըրվում:

Թիֆլիս, 24 հոկտեմբերի 1884

ՄԵՐ ՄԱՄՈՒԼԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ.

Մեր պարբերական մամուլի մէջ ամեն բանի վերայ գրվում է, նոյն իսկ մի ուսուցչի, մի գիւղական քահանայի կամ մասնաւոր մի անձի ապրուստի հոգսն քննութեան և տաք վիճաբանութեան առարկայ է դառնում, իսկ իւր—մամուլի դրութեան մասին գրեթէ ոչինչ չէ գրվում նրա մէջ, և նրա գոյութեան և բարգաւաճման համար հոգացող խօս չը կայ ու չը կայ: Թէպէտև բազմիցս գրուել է, որ մամուլը մի ժողովրդի քաղաքակրթութեան գործում ամենազօրաւոր գործիչն է, որ մամուլը կոչուած է պաշտպանելու այն ժողովրդի շահերը, որի համար նա գործում է, որ մեր մէջ մամուլը տարածում է ընթերցասիրութիւնը, մայրենի լեզուն ժողովրդի մէջ, որ նա մութ անկիւններում լոյս է սփռում և առանձնապէս կոչուած է պաշտպանելու ազգային եկեղեցին, դպրոցները, ժողովրդական հաստատութիւնները, միշտ օգնելով և իւրովսին նըպաստելով ամեն հանրօգուտ և բարենպատակ ձեռնարկութիւններին,—այնուամենայնիւ ամենից աւել անտարբերութեան և անհոգութեան մատնուածը մեր մէջ՝ պարբերական մամուլի գոյութեան և պահպանութեան խնդիրն է:

Դեռ այսօր էլ կտակ անող կամ նուիրատու հայ մարդը կարծում է, որ իւր անունը բարձրացնում է և իւր ազգի օգտին ծառայութիւն է մատուցանում, երբ նա մի եկեղեցու զանգակատունն է շինել տալիս, մի դպրոցի մի գումար է նուիրում կամ մի երիտասարդի ուսման ծախքը հոգում է... իսկ մամուլի գոյութեանը նպաստելու միտքը—նրան անմատչելի է:

Մի երևոյթ մեզ առիթ է տալիս մեր մամուլի դրութեան վերաբերութեամբ մի քանի խօսք ասելու, որին մենք հանդիպում ենք մեր մամուլի մէջ սովորաբար իւրաքանչիւր տարուայ վերջի ամիսներում:

Միմիայն մեր մամուլի մէջ կարելի է կարդալ անդադար, որ „խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներից, որոնք դեռ չեն վճարած բաժանորդագինը, շտապեն հասցնել այն խմբագրութեանը":

Պէտք է աւելացնենք և այն, որ միմիայն մեր մէջն է, որ պարբերական թերթի վճարը ապառիկ է մնում: Մեզանում թերթին չը վճարելը հնացած ախտ է և այնքան սովորական, որ շատերը բաժանորդագինը կորելը անպատուութիւն չեն համարում:

Դադարած և այժմս հրատարակուող հայ պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւններից իւրաքանչիւրը կարող է իւր գանգատներն անել այդ մասին:

Պէտք է այն էլ ասենք, որ մեր յարգելի պաշտօնակիցները իրենք պակաս չեն նպաստել մամուլի այժմեան դրութեանը, աւելորդ տեղը թերթի համարները ձրի ուղարկելով և ձրի յայտարարութիւններ տպելով:

Թողնում ենք իւրաքանչիւր խմբագրին իւր թերթի հոգացողութիւնը, մենք ուզում ենք այժմս մի քանի նկատողութիւններ անել «Նոր-Դար»-ի վերաբերութեամբ:

Գրաւոր թէ բերանացի թերթի վերաբերութեամբ զանազան պահանջներ են դնում և խնդրում են մեզանից, որ մենք այդ ամենը կատարենք, մեզ օրինակ բերելով մայրաքաղաքների օտար մեծ թերթերը ինչպէս «Նովոստի»-ն:

Այդ մարդիկ բոլորովին չը գիտեն, որ մեր հայերի մէջ ամենօրեայ թերթ հրատարակելը—որքան էլ որ նա հասարակ խմբագրվում լինէր և բովանդակութեամբ էլ աննշան լինէր—այնպիսի ծանր պայմանների մէջն է դըրուած, որ ոչ մի օտար խմբագրութիւն կարող չէր գոյութիւն ունենալ:

Ինչպէս անէ ամենօրեայ թերթի խմբագիրը, երբ թերթի համարները ձրի կը կարդան խնայելով համարի համար հինգ կոպէկը երբ մէկ բաժանորդը տասը քըսան տեղ կ'ուղարկէ իւր համարները կարդալու համար, երբ համարները մէկ քաղաքից միւս քաղաք կուղարկուին: Այս տարի «Նոր-Դար»-ի խմբագրութիւնը հասցէներ փոխելու մասին կանխաւ ոչինչ յայտարարութիւն չանելով, ստիպուած էր մի քանի հարիւր հասցէ փոխելու համար բաւականին գումար ծախսելու. նա, որ Թիֆլիսումն էր գրուած, սկսաւ ստանալ Փարիզ և այլն:

Ի՞նչ անէ ամենօրեայ թերթի խմբագիրը, երբ տարին վերջանում է արդէն, իսկ ապառիկները մընում են. այն բաժանորդները, որոնք դեռ չեն վճարել կամ նըրանք, որոնք խմբագրութեանը աջակցելու նպատակով բաժանորդներից փողերը հաւաքել են—լուռ և մունջ են մնում, կարծէք թէ խմբագրութեան յայտարարութիւնները այդ մասին իրենց չը լինի վերաբերում... դրանք ձայն են հանում միմիայն այն ժամանակ, երբ թերթի մի որևէ համարը փոստում կորչում և իրենց չէ հասնում:

Որովհետև վերջերումս մենք ստիպուած ենք բարակ թղթի վերայ հրատարակել «Նոր-Դար»-ը, այդ մասին էլ գանգատներ ենք լսում: Ինչպէս անենք. մենք թուղթը առնում ենք Թիֆլիսում, իսկ մեր գործածած թղթից չը կայ, այժմս վերջացել է, և սպասվում է Ռուսիայից ամսոյս վերջին:

Մենք առ այժմս ստիպուած ենք այդ բարակ թուղթը գործածելու, թէպէտև մենք այդ թըղթին—աւելի ենք վճարում:

Գիտենք, որ ասողներ կը լինին, թէ ինչ բաների վերայ ենք գըրում և միթէ թերթի ապառիկների և թղթի հաշիւը կարելի է առաջնորդողի նիւթ շինել:

Այդպիսիներին պիտի ասենք, որ տէրութիւնների հաստատութեան և յառաջադիմութեան խնդրում փինանսները մեծ տեղ են բռնում, որովհետև մամուլն էլ մի հաստատութիւն է և դեռ վեցերորդ զօրութիւնն է համարվում, ուստի աւելորդ չէ հրաւիրել հասարակութեան ուշադրութիւնը նըրա փինանսական դրութեան վերայ:

Մենք չենք հրաւիրում այն մարդիկների ուշադրութիւնը «Նոր-Դար»-ի վերայ, որոնք փոքրոգութիւնից, անձնական կրքերից կուրացած, գիշեր ու ցերեկ ամեն հնարք գործ են դնում «Նոր-Դար»-ը խափանելու և խիստ նեղանում են, որ այսօր նա ամենից անհամեմատ տարածուածն է և աւելի ազդեցութիւն և ներգործութիւն ունի, թէկուզ իրենց՝ այդ մարդիկների վերայ:

Մենք հրաւիրում ենք այն մարդիկների ուշադրութիւնը ամենօրեայ թերթի գոյութեան պահպանութեան վերայ, որոնք հեռի անձնական նկատումներից, սիրտ և հոգի ունին իւրաքանչիւր հանրօգուտ հաստատութեան համար, մենք հրաւիրում ենք մեր հայ ժողովրդի այն պարզ և անկեղծ մասի ուշադրութիւնը „Նոր-Դար"-ի գոյութեան վերայ, որը իւր կոպէկները չէ խնայում նրա համար, և երբ մի օր թերթը ուշ է ստանում, սիրտը թմթռում է...

Մենք ամենօրեայ թերթի վերայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելով, մեր պարտքն ենք կատարում, ինչպէս որ թերթը շարունակ հրատարակելն էլ մեր պարտքն է:

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԱՒՐԻԶԻՑ. Նորին Վ.ԵՀ. Պարսից Նասրադ-դին Շահի գահաժառանգ որդի արքայազն Մուզզա-Ֆերեդ-դին Միրզայն զօրապետի պաշտօնական հանդերձով գրեթէ ամենայն օր զինուորական կրթութեամբ է զբաղվում: Նորին Վսեմ. քաջավարժ է օդի մէջ 10 կոպէկանոց արծաթադրամը գընդակահարել հրացանով, հմուտ է թընդանօթաձգութեան արհեստի մէջ և մինչև անգամ մի թնդանօթը կարողանում է շարժել միայնակ մի տեղից միւս տեղ բաւականին հեռու: Ձիարշաւութեան մէջ գերազանց է: Ապագայն Երջանկութիւն է խոստանում: Դեռ մինչև այսօր արքայական տոհմի անդամները այդպիսի կրթութիւնների վերայ ուշք չեն դարձրել: Սա առաջին անգամն է:

—

ՄԱՐԱՂԱՅԻՑ (Պարսկաստան). Վեց հոգուց բաղկացած մի սրիկայախումբ յարձակուելով քաղաքիս փողոցապահի (դարուղայ) ծառաների վերայ՝ երկուսին վիրաւորում են: Քաղաքապետի մարդիկները չը կարողացան նրանց ձերբակալել: Դպրոցն էլ աննախանձելի դրութեան մէջ է գտնւում, որովհետև պ. Ա. Վ. նախանձուելով եղբ. Թումանեանցների բարենպատակ ձեռնարկութեան՝ ցանկանում է, որ իւր հովանաւորութեան ենթարկուի այդ դպրոցը: Եթէ արդարև պ. Ա. Վ. այդպիսի նպատակ ունի, կարող է մի այլ հայաբնակ քաղաքում կամ գիւղում մի առանձին դպրոց բանալ, Մուժամբարում, Խոյում, Փայասկարանի (Ղարադաղի) գաւառների մէջ, և այլն և այլն, էլ խօչընդոտ չը լինել եղբ. Թումանեանցների ձեռնարկութեան:

—

ԹԱՒՐԻԶԻՑ մեզ գրում են. Վերջապէս „Արամեան" դպրոցի հոգաբարձութիւնը իւր խոր թմրութիւնից արթնանալով ուղղեց իւր վաղաժամանակեայ սխալ քայլը: Պ. հոգաբարձութիւնը 'ի նկատի ունենալով, որ առանց հմուտ ղեկավարի (որպիսին է Գերաս. Մաշուրեան Սէթխանեանցն) գրեթէ անհնար է դպրոցները բարեկարգել, դիմեց Նորին գերազանցութեան, որը ազգասիրաբար ընդունեց հոգաբարձութեան խնդիրը: Գերաս. Սէթխանեանցն, չը նայելով իւր անձնական տկարութեան՝ շարունակ այցելում է դպրոցը և ներկայ լինում ուսուցչաց դասաւանդութեանց: Ցանկալի էր տեսնել, որ յետ այսու հոգաբարձութեան անդամները իրենց անձնական կրքից թելադրուած բաւական համարէին ազգին վնասելուց, հեռանալով ռուսական առածին (служба служба, дружба дружба): Յուսանք և սպասենք...

—

ՄԱՐԱՂԱՅԻՑ (Պարսկաստան) մեզ գրում են. Հաշտարի անուանեալ ճանապարհի վերայ 80-աչափ մարդիկ կողոպտվում են թուով վեց հոգի աւազակներից, որոնց մէջ լինում է համբաձում անուանեալ հայ մարաղացին, որը երկար ժամանակից 'ի վեր այդ կողմերումն արհեստի աշխատանքով հազիւ թէ կարողացել էր մասնաւորապէս իւր ընտանեաց օրական պարէնը ձեռք բերել: Խեղճին մերձ 'ի մահ գանակոծելուց յետոյ՝ գրեթէ 70 թումանաչափ (220 ր.) կայքը կողոպտում են: Նա այժմ հիւանդ պառկած է վերջին թըշուառութեան մէջ: Մէհտի-Խան քաղաքապետը լսելով՝ մի քանի հարիւր ձիաւորներով հետևում է աւազակներին և ձերբակալում է միայն երկու հոգի, որոնցից մէկն է Մարաղայի Մուչահիդի (Դենկեա) ծառան, իսկ միւսը Միանդաբեցի: Հետևանքը կը հաղորդեմ:

—

ՍՈՎՈՒՂ-ԲՈՒԼԱՂԻՑ (սառն աղբիւր) (Պարսկաստան) մեզ գրում են. Երկար տարիներից 'ի վեր հայ վաճառական դասակարգը առևտրականութեամբ պարապելով թէ քաղաքում և թէ շրջակայքում մեծ հարստութիւն ձեռք ձըգելից բացի՝ տեղացի քրդերը համակրութեամբ էին վերաբերվում դէպի հայերը...: Առ այժմ Սալարի նահանգապետութեան օրով գրեթէ մարդասպանութիւնը մի սովորական արհեստ է դարձել: Երկու տարուայ ընթացքում սպանուել են տասն և երկու հայեր, որոնցից երեքը (Յովակիմ, Միրզա և Աստուածատուր) Թաւրիզու վաճառականապետ պ. Նազարբէկեանցի գործակատարներն էին: Զարմանում ենք, ինչու դատ չէ սկսում, քանի որ իրեն յայտնի է, թէ ովքեր են մարդասպանները, մանաւանդ վերջինին սպանողը եղել է նոյն ինքն Սալարի քեռորդին...:

—

ԲԻՆԱԲԻՑ (Մարաղայի մօտ հայաբնակ մի գիւղ է). Շնորհիւ մարաղայաբնակ պ. Ա. Ա-եան գինեվաճառ օտարականի, տեղացի հայերը մեծ տագնապի մէջ են: Մօտերումս պարոնի թակարդին զոհուեցաւ մի հայ գերդաստան, ընդունելով մահմեդական կրօնը...: Պատճառները թէև պարզ են, բայց բացատրութիւնը թողնում ենք խաւարի վարագոյրի տակ, զգուելով միանգամայն հայ անուն կրող այդ տեսակ անձնաւորութիւններից...:

—

ԱՐՏԱԲԻԼԻՑ (Պարսկաստան) մեզ գրում են. Երեք տարի է, որ մեր „հաւատոյս" եղբայրները այստեղ բացել են գրավաճառանոց, աղօթատուն և դպրոց, անխնայաբար որսում են պապական աղանդի և կրօնի պաշտպանողներին: Ցաւալին այն է, որ հայադաւան հայերի չորս տարուայ գոյութիւն ունեցող դպրոցը իւր ճգնաժամին մատնելով փակուել է բոլորովին: Ուստի խնդրում ենք պ. պ. Մ. Շահբազեանցի և Խաչիկեանցի ուշադրութիւնը այս մասին: Եւ ինչներիս է պէտք սև հարստութիւնը, երբ մեր ձեռքովն ենք փորում մեր ապագայ սերունդների գերեզմանները և նրանց կենդանի կենդանի թաղում… Յուսանք……

—

ԳԱԶԱԽՆԻՑ (քաղաք Պարսկաստանի). Չորս տարի առաջ տեղացի Հայ վաճառականները հանգանակութեամբ ժողովել են երեք հազար թուման (900 ռուբ.), որպէս զի դպրոց բացուի։ Այդ գումարը տոկոսով յանձնուել է պ. Բէգլար Բարխուդարեանցին։ Դեռ մինչև այսօր և ոչ մի անօրէնութիւն չէ եղել, իսկ հանգանակած գումարը առայժմ ում մօտ է գտնւում, մեզ անյայտ է։ Յոյս ունինք, որ պարոնք կը յայտնեն դրամագլուխը ում յանձնելը և կ'աշխատեն այդ բարենպատակ հիմնարկութեան իրագործման։

—

ԹԱՒՐԻԶԻՑ Հոկտեմ. 2-ին գեր. Հայր Տէր-Դանիէլեանցը ժամանեց քաղաքս։ Համայնութիւնը դիմաւորեց նրան մեծ պատուով։ Բացակայ էին մի քանի աղաներ։ Ամբողջ համայնութիւնը խուռն բազմութեամբ քաղցրաժպիտ երեսին դիմաւորում են Նորին սրբազնութեան աջն համբուրելու և արտայայտելու իրենց հոգեկան ցնծութիւնը։ Ամեն կողմից հեռագիրներ են ուղղվում Ս. Հօրը գալստեան առթիւ։ Յոյս ունինք Նորին սրբազնութիւնը ընդհանրութեան շահը մի քանի աղաների պատուասիրութեան չի զոհէ։ Որչափ զրպարտութիւններ էլ որ ենթարկուելու լինի սրբազը, վերջը յաղթութիւնը ճշմարտութեան կողմն կը լինի։

—

ՄԱՐԱՂԱՅԻՑ (Պարսկաստան). Երկու աւազակներ այգին մտնելով մի քանի ՃԻԹ (ուռ.) խաղող էին գողացել։ Պահապանը նրանց տեսնելով մենակից լեռով' քիթները ծակեց և զաղել անցկացնելով հրամայեց խանութներից փող ժողովել, որպէս վարձ պահնորդների։ Մունետիկը առջևից, իսկ պահնորդները աւազակների քթածակերից անցկացած զաղելից (հաստ թել շինուած ուղտի բրդից) բռնած ամեն փողոցները պտտացնելով փող ժողովեցին։ Մունետիկը շարունակ բղաւում էր. „Ով որ գողութիւն անէ այս պատժին կ'արժանանայ"։ Այստեղ յարմարում է աւետարանական այն պատուէրը ասել, թէ' „մժղուկները քամում են, իսկ ուղտերը կուլ տալիս"։ Այս ինչպէ՞ս մարդասպանները անպատիժ են մնում…։

—

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ. պ. Խալաթեանը Հոկտեմբերի 23-ից հեռագրում է մեզ. „Այսօր ահագին բազմութեան ուղեկցութեամբ և չը տեսնուած հանդէսով կատարուեցաւ հանգուցեալ աւագ քահանայ Յակոբ Սուրէնեանցի յուղարկաւորութիւնը և թաղումը։

—

„Figaro"-ի ասելով' մօտիկ ժամանակում կսկսի հրատարակուել և կը ծախուի Փարիզում, Մինխենում և Եւրոպայի միւս մայրաքաղաքներում „Միջազգային Վագներեան լրագիր"։ Լրագիրը կը տպագրուի վեց լեզուներով. նրա մէջ բարձր ոճով կը քարոզուի անմահ կոմպոզիտորի փառաւորութիւնը։ Այդ դրամատիկական—մասնագիտական օրգանին կը մասնակցեն Վագների ամենանշանաւոր պաշտպանները, բոլոր ազգութիւնների մէջ։

—

„Новости"-ն լսել է, որ կառավարչական շրջաններում այժմս քննվում է քաղաքներում յօգուտ քաղաքային գանձարանի առանձին հարկ նշանակելու երաժշտա-թատրոնական զուարճութեան հիմնարկութիւններից և երեկոյթներից։

—

„Нов. Вр."-ն հաղորդում նկարիչ Այվազովսկու կեանքից մի հետաքրքրական անցք է պատմում։ Երբ Այվազովսկին մտաւ նկարչութեան ակադեմիան, սկզբում Նիկոլայ Պավլովիչը իւր հովանաւորութեան տակ առաւ նրա տաղանդը, բայց շուտով երիտասարդ ուսանողը ատելի դարձաւ։ Դրա պատճառը ակադեմիայի պրոֆէսորներից մինի նրա մասին յայտնած կարծիքն էր։ Այդ պրոֆէսոր Տաններ Այվազովսկու մասին Կայսրին ասաց, որ նա յամառ է, անհնազանդ է և նրա ապագան կասկածաւոր է։ Միւս պրոֆէսորները այլ կարծիքի էին, մանաւանդ Զաուէրվէյդը, որը Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաևնային (Վիւրտեմբերգի թագուհին) և Լէյխտենբերգի հերցոգուհի Մարիային նկարչութիւն էր սովորեցնում։ Սակայն ոչ ոք չհամարձակուեցաւ մի խօսք ասել Կայսրին տաղանդաւոր ուսանողի օգտին։

Մի անգամ Նիկոլայ Պավլովիչը եկաւ ակադեմիան Տաններին մի նոր նկարը տեսնելու։ Կայսրը գովեց նկարի մէջ օդի տեսքը, բայց ջրի և միւս մանրամասնութիւնների տեսքը չը հաւանեց։ Այդ ժամանակ Զաուէրվէյդը վճռեց դէպքից օգուտ քաղել։

—Թագաւոր, ասաց պրոֆէսորը, ակադեմիայում մեզ մօտ մի երիտասարդ տղայ կայ, որը կարող է միևնոյնը նկարել երեք անգամ աւելի գեղեցիկ։

—Ով է.

—Այվազովսկին է։

Կայսեր ճակատը խոժոռեցաւ։ „Անկարելի է" բացագանչեց նա։ Բայց Զաուէրվէյդը արդէն կարողացաւ Այվազովսկուն գովաբանել, այնպէս որ Կայսրը հանդարտեցաւ և հարցրեց.

—„ինչո՞ւ դուք առաջուց նրա մասին ոչինչ չէք ասել."—„Որովհետև, պատասխանեց Զաուէրվէյդը, մրրկի ժամանակ փոքր նաւակի համար վտանգաւոր է մօտենալ մեծ նաւին, որին դիպելով նա կարող էր փշրուել. բայց երբ ծովը հանդարտվում է, այն ժամանակ և նա կարող է հասնել նրան։"

Այդ պատասխանը Այվազովսկու օգտին էր։ Կայսրը կարգադրեց երիտասարդ նկարչին ուղեկցել 15 ամեայ Մեծ Իշխան Կոնստանդին Նիկոլաեւիչին Բալթիկ ծովի վերայ ճանապարհորդութեանը, իսկ վերադառնալուց յետոյ Այվազովսկին Պետերհոֆում գործատուն' ստացաւ. յետոյ Կովկասից մինչև Սպանիա ճանապարհորդեց, մի քանի տարի Հռոմում անցկացրեց և Նեւ-Եօրքի պալատը զարդարեց իւր մեծ պատկերներով։ Այվազովսկու 140-ից աւել նկարները Ռուսաց կառավարութեան սեփականութիւն են կազմում, յիսունից աւել պատկերներ Կ. Պօլսում են գտնվում, նրա շատ նկարներ էլ Փարիզում և այլն։

—

ԳԱՐԱԴԱՂԻՑ (Փայտակարան) մեզ գրում են. Քանի մի տարի սրանից առաջ, շնորհիւ գերապ. Հայազգի Ծատուր խան Սէթխանեանցի (Պարսից արտաքին գործոց մինիստրութեան անդամ) հովանաւորութեամբ Բէյլան գաւառի հայերը ազատուեցան քրդերի անտանելի բռնակալութիւններից։ Հազիւ հանգստացել էին, մօտերումս այդ խաները մի պարսիկ կնոջ մեռած դիակ ձգելով այդ գաւառի հայաբնակ մի գիւղի մօտ' զրպարտում են հայերին և ասպատակում գիւղը։ Տէրունի հայերը այժմ Թաւրիզումն են, գերապ. Սէթխանեանցի միջնորդութեամբ դիմել են Նորին գերազանցութիւն Պարսից արտաքին գործոց մինիստրին, նրա հովանաւորութիւնը խնդրելով։ Յոյս ունինք, որ Նորին գերազանցութիւնը խեղճ հայերին ազատելով կատաղի խաներից դրանով կ'անմահացնէ իւր անունը։

—

ՇԱՄԱԽԻ. Գիւղացիք իրենց խաղողը յաջողութեամբ ժողովեցին։ Խաղողը այս տարի շատ առատ էր։ Անցեալ տարի խաղողի թաղարը (25 պութ) 25—30 ռուբլի էր վաճառվում, բայց այս տարի 15—18 ռուբլի։ Անցեալ տարուայ գինու հետ համեմատած, այս տարուանը ցածր է։ Որովհետև այս տարուայ ողկոյզները շատ խիտ էին հատիկներով, որը լաւ չը քաղցրացաւ խաղողի ծառի վերայ։

Վերջանալու վերայ է և գիւղացոց վար ու ցանքի գարնանային աշխատանքը։ Շատ տեղերում, արդէն 3 վերշոկի չափ բարձրացել է նոր հացաբոյսը։

—

Նոյն տեղից. Հաստատ աղբիւրից լսեցինք, որ Բաղչէի և Խիզանի սահմանների վերայ գտնուող 5 հայ գիւղերի բնակիչք բողոքականութիւն են ընդունել։ Այն տեղի մարդոց միսիոներների գրելով, այս տեղի բողոքականք մի փոքր գումար փող ուղարկեցին, իբրև նպաստ նոր որսուածներին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՔԱՂԱՔ, 20 Հոկտեմբերի. 1840 թուականին մի բուռն հայ ժողովուրդ, որ բնակվում էր Գզլարին մերձ Բէքեթայ գիւղում, կառավարութեան համաձայնութեամբ գաղթում է Թերեք գետի ափից դէպի Կումա գետակի եզերքը, իւր միջին ընթացքի մի բարձրութեան վերայ հաստատուելով, դնում է մի գիւղի հիմք, որը 1856 թուականից կրում է Սուրբ Խաչ քաղաք անունը։

Այս քաղաքը այժմ ունի 600 տուն բնակիչ. Թէպէտև մեծամասնութիւնը բարբառում է մայրենի լեզուով, բայց մի քանի ընտանիքներում դեռ ևս գործածական է թաթի լեզուն, որը խառնուրդ է պարսկերէնի և հրէական բարբառի։ Կրօնով բոլորն էլ հայադաւան են. ունին երեք եկեղեցի, երկու ուսումնարան, պլանով ձևած լայն և կեղտոտ փողոցներ, անշուք միյարկանի հողեայ տներ, որոնց կտուրները ծածկուած են ղամիշով, ներսից սպիտակացրած, յատակած, պատերը պարզարդուած թաղարներով և սրբոց պատկերներով, պատուհանները վարագուրուած, սան մի անկիւնում կապած է թախտը, վերան փռած տեղը գործած զանազան կարպետներ, մի սեղան և մի քանի աթոռներ, միւս անկիւնում դրած է ռուսական վառարանը. այս տան ներսը։ Իսկ հայաթները կեղտոտ և ընդարձակ են, մի քանի տնային թռչուններ շրջում են գինու սակառների մէջով, որոնք եղեգնեայ ցածր պարիսպով շրջապատուած են և ունին մի դուռը կամ անդուռ են։ Չը նայելով որ այս քաղաքը գտանվում է Ռուսիայի հարաւային մասում, Ստաւրոպոլի նահանգում, և շրջապատուած է գերմանացիներով և ռուսներով, որոնք արդէն գիւղատնտեսութիւնը հասցրել են մի որոշ կատարելութեան, մանաւանդ' առաջինները, ցաւօք սրտի պէտք է ասել, որ սուրբ խաչեցիք ոչ մի օրինակ չեն վերցնում հարևան ազգերից և նախանձախնդիր չեն լինում ոչ նրանց յառաջադիմութեանը և ոչ բարօրութեանը։ Այստեղ գիւղատնտեսութիւնը շատ աննախանձելի վիճակի մէջն է։ Սրանց ապրուստի գլխաւոր աղբիւրներ կազմում են' գինեգործութիւնը և երկրագործութիւնը. այստեղի գինիք մեծ հռչակ չը ստանալու պատճառն այն է 1), որ այգիքը գտանվում են ճահճային տեղերում, 2) որ գինիքը հին նահապետական ձևով են պատրաստում։ Ինչ կը լինէր, որ տեղային երիտասարդները գոնէ ուշի ուշով կարդային պարբերական թերթերում գինեգործութեան վերաբերեալ յօդուածները, և իւրացնելով կատարէին այդ յօդուածների բովանդակութիւնը։ Միակ նոր բանը սրանց գինեգործութեան մէջ տակառներն են, որոնց մէջ ածելով կոխ տուած գինիք, մի կամ երկու շաբաթ եռ գալուց յետոյ, ծախում են տեղը եկած գինի գնողների վերայ 1—2 ռուբլով, և կամ իրանք են տանում Ռուսիայի զանազան քաղաքները։ Այս տարի մինչև թուով այստեղ ստացած կը լինեն 6000 տակառ գինի։

Երկրագործութիւնը նոյնպէս նահապետական աննախանձելի դրութեան մէջն է. ունին 31,000 դեսեատին հող, 30 ուչաստկի վերայ բաժանած, հողագործը իւրաքանչիւր դեսեատինին վճարում է չորս ռուբլի և իրաւունք ստանում երկրագործութեան, այս փողերը հաւաքվում է տնտեսական վարչութեան մէջ և գործ է ածվում քաղաքի օգտին։ Ցանում են ցորեն, գարի, կտաւհատ և այլն. բայց այս ցանած հատիկները Աստուած է բուսցնում և բնութիւնը աճեցնում, որովհետև այս անհուն տարածութիւնը բոլորովին ամայի և անջուր է, իսկ քաղաքացոց մէջ չը կան այնպիսի ունեւորներ և կամ չեն կամենում, որ ձեռք ձեռքի տուած մի ընկերութիւն հիմնեն և մի քանի հազար ծախսելով կարողանային ջրանցք բանալ տալ, 'ի բարօրութիւն թշուառ և աղքատիկ ժողովրդեան, որով թէ մի լաւ գործ կատարած կը լինեն և թէ իրենց համար հարստութեան դուռ բացրած։

Ընդհանրապէս' այս քաղաքի ժողովուրդը շատ աղքատ է, մանաւանդ այս վերջին երեք տարիները մեծամեծ վնասներ կրեցին ցրտից և երաշտ տարիներից, այնպէս որ ոչ թէ միայն կարողանում են վճարել իրենց հողի արտադրութիւնը, այլ և իրենց օրական պարէնը գտնելու համար ստիպուած են թափառել շրջակայ գիւղօրէից բաղաքներում։

Այստեղի աղքատութեանը ոչ սակաւ նպաստում է ծոյլ կինը, որը իւր անսանձ ու անհաքանդ պահանջներով քանդել է իւր մարդու վիզը։ Նա պահանջում է թանկագին շորեր, լաւ ուտել խմել, իսկ նոր մօդաններ իրենց աղջիկների համար—հարմօններ, շլեաներ, ամեն օր թէյ, մանաւանդ սերով սուրճ, որ ոչ մի տանը պակաս չէ, այն ինչ արիւն քրտինք թափող մարդը շատ անգամ մի ցնցոտի վերարկուով և կարկտած կօշիկներով, շան չարչարանք քաշելով հազիւ կարողանում է ծայրը ծայրին մօտեցնել։

Սուրբ խաչեցիք, կորցնելով հանգ. Պավել և Նիկոլայ Կայսրների տուած արտօնութիւնները' 1874 թուից արդէն ենթարկվում են զինուորագրութեան։ Ամեն տարի 21 տարին լրացած ուժեղ և առողջ երիտասարդներն վիճակով տանում են, և մի քանի ամիս կամ տարի զինուորական ծառայութեան մէջ մտնելուց յետոյ, վերադառնում են հայրենի քաղաքը, պատերազմի ժամանակ պատրաստ լինելու պայմանով։ Քաղաքացիների հարկը մարդագլուխ մէկ ռուբլի է, գինու տակառներից էլ 20 կոպէկ։

Աւելորդ չեմ համարում յայտնել ձեզ այստեղի մթերքների գները. ոչխարի մսի փութը 6 կոպ., տաւարինը' 5 կ., ալիւրի պութը' 60 կոպէկ, եղի փութը' 30 կոպէկ, հացը' 4 կոպէկ, պանրի պութը' 2—5 ռուբլի, մէկ չափ կարտոֆիլ' 55—60 կոպէկ, ածուխը 40 կոպէկ։

Կոստ. Միրիմանեանց.

—

ՇՈՒՇԻ, 18 Հոկտեմբերի. Մեր քաղաքում կայ այլ և այլ սովորութիւններ. բոլոր սովորութիւնը ապագայի համար թողնելով, կը պատմեմ միայն երկու սովորութեան, աշխատելով նրան երեւան հանել, որ չափազանց վնասակար և տանջանքի է ենթարկում ամբողջ գաւառակը։ Նշանադրութիւն և հարսանիք, ահա մեր խօսակցութեան նիւթը։

Հարուստի համար հեշտ է աղջիկը մարդու տալը, նա կամ կը մերժի իւր աղջկայ ձեռքը խնդրողին կամ կը կատարէ փեսայի պահանջները։

Կարօղութիւն ունեցողը, պարզ է, իւր քէֆին համեմատ գործ կը բռնի, բայց արհեստաւոր դասակարգը…։ Նրանք իրենց արածը պարտքով են կատարում։ Նոյն մի օրինակ տեսնենք. նշանադրութեան համար երիտասարդ խումբի մէջ խօսակցութիւն է բացվում, առաջին խօսքը բաժինքի մասին է լինում. „աղա հինչըն տալիս", միւսը պատասխանում է պոռոզութեամբ. „տասներկու պոլիմպերեալ, մի մատանի, ոսկի թլինէ, ոսկի կոճակ, ոսկի թոխկայ, կեռքայ, կարպետ, կուժ, ափթափայ, սանդուղներ, չորս ձեռք շոր, եօրղան դօշակ"։ Այսպիսի բաժինք տալը, որը գլուխ բերելու համար բաւականին գումար է հարկաւոր, միայն ունեւոր մարդը կարող է վճարել, բայց արհեստաւոր մարդու դրութիւնը ինչ կը լինի, երբ նա վերև յիշածները պատրաստի վճարում է իւր փեսային։ Արհեստաւորը, որ իւր աշխատանքով միայն կարողանում է իւր ընտանիքը կերակրել, ինչպէս կարող է առանց պարտքի աղջիկ մարդու տալ, քանի որ փեսան աւելի է պահանջում. ուրեմն նա ընկնում է պարտքի տակ. Նա, որ տանը ունի 2—3 աղջիկ, իւրաքանչիւրի համար թէ պարտք անէ ամենաքիչը 400 ռուբ., երևակայեցէք, երեք աղջկայ համար որքան պարտք կը լինի. և նա իւր ժամանակին չկարողանալով պարտքը վճարել' տոկոսը հետզհետէ բարդվում է և դառնում մի ահագին պարտք, որի տակից ազատուել նա չէ կարողանում և տանջուած է լինում իւր տանը ու տեղը գրաւի տալ զրկել։ Այսպիսի անտեղի սովորութիւնը տարածուելով մեր քաղաքում, գիւղացիք էլ են սովորել և աղջկայ վերայ երբեմն աւելի պահանջում են ձի, կով, եզ, շատ անգամ փող։ Թէ աղջկայ հայրը չը կարողացաւ վճարել նրա առաջարկած օժիտը, փեսան չի ուզել նրա աղջիկը և աղջիկը մնալով տանը մեծանում է։ Գիւղական մի վատ սովորութիւնն էլ այն է, որ մեծահասակ աղջկանց վերայ չեն նշանադրվում ասելով, որ „քալթառել" է։ Աղջկայ հայրը նկատելով, որ իւր աղջիկը մեծանում է, թէ ու թիկունքը հասնում և հարկաւոր է նրան նշանադրել, բայց նա տեսնելով, որ առանց վճարելու բաժինք ոչ ոք չէ ցանկանում մօտենալ, հետևաբար նա շուտ պարտք է անում և իւր աղջկան մարդու տալիս։ Քանի-քանի թշուառ ընտանիքներ կան, որոնք, ունենալով հասած աղջիկներ' իրենց տան ունեցած չունեցածը ծախել են և նրան պսակել, բայց կան աղքատիկներ, որոնք այդ վերջիններից էլ զրկուած են և տանը ունին միմիանից յետևից հասած աղջիկներ, բայց ոչ ոք չէ ցանկանում մօտենալ, որովհետև աղքատ է։ Քանիսները կան, որ մի կամ երկու պսակի կատարելու համար ընկած են խոշոր պարտքի տակ։ Չենեցոց մարդիկ անգամ աշխատում են այնպիսի տեղից աղջիկ ուզել, որ աղջկայ վերայ կարողանան աւելի բաժինք պահանջել. Այս պսակելը աչքերիս առաջն է. Մի օր հանդիպում եմ իմ վաղեմի ծանօթին և հարցնում եմ, „քո որդին պսակեցիր են թէ ոչ"։ Նա պատասխանեց. „ցանկանում էինք մեր հարևան քոռ (կոյր) Դ…ի աղջիկը ուզել, բայց չենք համաձայնուել, որովհետև շատ բան պահանջեցինք և նա չտուեց։ Մի թէ դու չգիտես, որ նա կարողութիւն չունի, և իւր տանն էլ միայն աղքատութիւնով է կառավարվում, էլ ինչպէս կարող է նա քո ցանկացած վճարել պատասխանեցի ես։ „Բայց ինչու ուրիշները անում են, նա էլ անէր" քան ինչով պետք կառավարուեմ. այժմ ուրիշ տեղից աղջիկ եմ ուզել և բաւական բաժինք է բերել իւր հետ", պատասխանեց ծերը: Ինչպէս սովորութեան վերայ է, ուռնուը կատարւում է աւելի, ուրիշներն էլ նրանից օրինակ են վերցնում և մեծ մեծ պահանջում, բայց վա՜յ աղջկայ տիրոջը: Չը նայելով աւելի պահանջումներին, կան շատ և շատ շռայլ ծախսեր, թէ նշանդրէքի և թէ հարսանիքի համար: Նշանդրէքով հրաւիրուած են լինում մինչև 50 մարդ և նրանց ուտացնում խմացնում են 3—4 տեսակ կերակուրներով, գինիներով և քաղցրեղէններով. պասի ժամանակ երկապատիկ աւելի: Բացի այդ շռայլ ծախսերից՝ խոնչայ, շաքար, չայ և այլ քաղցրեղէններ են ուղարկում փեսայի տունը, որը քիչ ծախսը չէ: Պսակուելուց յետոյ կրկին ծախքեր են որ առաջ են գալիս. օրօրոց և շոր նորածին մանկան համար անշուշտ աղջկայ տէրը պարտաւոր է վճարել առանց այլևայլութեան, իսկ եթէ չը վճարեն, այն ժամանակ խռովութիւն կ'ընկնի, մանաւանդ կանանց մէջ: Այնուհետև լուրեր են որ միմեանց ուղարկւում են, հայհոյանքներ են որ իրար պատասխան տալով վերադարձնում են, քանդւում է բարեկամութեան կապը, փեսան ընդհատում է իւր աներոջ տուն գնալ-գալը և միմեանցից խռովում են: Այս բոլորը գրելով, ընթերցողը չը կարծէ, որ բացառութիւններ չը կան: Մի ժամանակ հանգուցեալ Սարգիս սրբազանը 1872 թ. „Բարեկարգութիւններ" վերնագրով մի գրքոյկ հրատարակեց, որի վերջում ստորագրուած են Շուշւոյ պատուելի ագաները: Դրանով խոստանում էին չը գործադրել շռայլ ծախսեր թէ նշանդրէքի համար, թէ պսակադրութեան և թէ ննջեցեալների համար, բայց այդ բարեկարգութիւնները միայն թղթի վերայ: Ո՛չ ոք նրան ուշադրութիւն չը դարձրեց, թէպէտև ստորագրել էին և համաձայնուել շռայլ ծախսեր չանելու: Հին նորից ցանկանալով կրկնել, սպասում ենք գեր. Սագինեանց արքեպիսկոպոսից, որպէս զի իմաստուն միջոցներով արմատախիլ անէ այդ ծանր և անտեղի սովորութիւնները: Քանի քանի խեղճ ընտանիքներ փառք պիտի տան այնուհետև Աստուծուն և իրենց ազատողի կենաց համար աղօթեն յաւիտեան, նրա բարի յիշատակը իրենց սրտում պահելով:

Խաչանէ:

ՆԱՄԱԿ ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ.

—

ՎԱՆ, 1 Նոյեմբերի. Հեռու, տարբերով մեր ազգայինք սպասում են դեռ ևս այն փրկարար միջոցին, որով Թրքահայերը վայելելու բաղդ ունենան իրենց անդորրութեան, բարօրութեան համար նշանակուած բարենորոգումները:

Դեռևս և զուցէ աւելի երկար միջոցներով, ամեն մի րոպէում, ամեն մի փոփոխում, վտանգ, վրէժանք, հարստահարութիւնք, ձերբակալութիւններ, խոշտանգութիւն Թրքահայերի գլխից պակաս չէ. ահա դրա համար ես խնդրում եմ ուշադրութիւն տալ հետևեալ, մեզանում տեղի ունեցած այն տխուր երևոյթի պատմութեան, որն մի յայտնի պատկեր է մեր կառավարութեան վարուողութեան ձևերի, մեզ հայերիս վերաբերութեամբ:

Անշուշտ՝ մինչև ցայժմ պարբերական հրատարակութիւններից լսած կը լինիք Վանում տեղի ունեցած այն իրարանցումները, ձերբակալութիւնք, հետախուզութիւններ և այլն և այլն, որոնք հասկացողին համար նշանակութիւն չունին դրուցի չափ անգամ. այլ լոկ մատնադաւերների կասկածանքներ, երևակայութիւնից խաբուած պարզամիտների ցուցանք, ստախօս պլպարտիչների բերաններում գլխներ շատացնելու և կասկածներ բարդելու պարտաւոր ընթացքով Օսմ. դահլին հպատակող հաւատարիմ և հլու հայ ազգին վերայ:

Մի հարցնէք թէ բանը ինչումն է և ինչ կայ բանի մէջ. ինքն ըստ ինքեան ոչինչ. երիտասարդի մէկի մօտ, գիւղից քաղաք դառնալու ժամանակ, գտնում է բերդան, որոյ պատճառաւ նա և ուրիշները ձերբակալւում բանտարկւում, սաստիկ հալածութիւնների և հարցաքննութիւնների ենթարկւում են. և այս որպէս փաստ կասկածանքների, տանից տուն խուզարկութիւններ անում և հրապարակական դատաստաններ: Մինչդեռ հրացանը Վան բերուել է երեք տարի առաջ, որ ժամանակ ոչինչ արգելքներ չ'կար և Ճանապարհորդը իւր պաշտպանութեան համար կրում էր իւր հետ:

Եթէ Վանի պոլիցիական կառավարութիւնը Ճամբորդի ձեռին գտնուած մի հրացանի պատճառաւ այսչափ ղալմաղալներ է հանում խաղաղ ժողովրդեան մէջ և տանջանքներ է կուտակում երիտասարդների գլխին, իւր աչքերը ինչո՞ւ է խփում չտեսնելու առաջակայ քրդերի ձեռքում ունեցածները. ինչո՞ւ և վարագուրի տակ է պահում նոյն իսկ քաղաքի Թուրքերի մօտ գտնուած այնպիսի, Շասպօ, Մարթինի հրացանները. վա՜յ դատապարտուելի աչառութեան: Նա մտնում է հայ պարկեշտ ընտանեաց մէջ խուզարկութիւններ անելու, կանայք հարցաքննելու, լեզուապատառ անում երեխաներին. ինչո՞ւ մի անգամ աչք չի դարձնում իւր քթի տակին, շուկայի մէջ խոխոտացող մեծամեծ Թուրքի մէջքին և կողքին լարած Ճերմակակոթ խանչալին, ռէվօլվէրին, եթէ զէնք կրելը խստու արգելուած է:

Միթէ մեղաւոր է հայն իւր ունեցած մի բերդանով, մինչդեռ նրանց մէջ գտնւում են հարիւրաւորներ, հազարներ: Թողունք այս, ով որ շրջագայել է աշիրէթ քրդերի մէջ, նա գիտէ և տեսել է որքան քանակութեամբ արքունի զանազան տեսակ հրացաններ և հակերով փամփուշտներ է գտնւում այդ լեռնականների մէջ, միջոց տալով ուզածնին անելու:

Վերջին ռուս—Թրքական պատերազմը մի դիպող միջոց եղաւ քրդերին ինչպէս պէտքն է զինուորուելու: Յայտնի է, որ Վասպուրական նահանգից միայն պատերազմի դաշտ որպէս օգնական զօրքեր հրաւիրուեցան մօտ 30—40 հազար քրդեր իրենց չէյխերով մէկտեղ. բոլորին բաժանուեցաւ Հէնրի Մարթինի այնպէս հրացաններ և նոյն քանակութեամբ փամփուշտներ. պատերազմէ վերջը ո՞ւր մնացին դրանք. վերադարձրին կառավարութեան թէ ոչ, այն դարձրին... Եթէ այդ ժամանակ նրանց ձեռքում կար մէկը, այժմ կը գտնես երեք. կարող եմ ասել տանը քանի տղամարդիկ կան, կան և այնքան արքունի հրացաններ, այնպէս որ այժմս նրանց մէջն էլ մօդայ է դառել նոր զէնքեր կամ այնպիսիներ ունենալ: Ահա քեզ հերոս միջոց հերոսութեամբ պլոկելու, սպանելու անզէն հայերին:

Աւազակը դուրս կը գայ մեր առաջ նոյն հրացաններով. Ճամբորդ քուրդը նմանապէս: Նա կէս վերստ և աւելի հեռաւորութեամբ գնդակով մի նշան տալիս է. „Էյ փլաւ (չոր գերի) հէնց այդտեղ հա՛ն շորերդ. մերկացիր, թող ձիդ և ամենայն ինչ, միայն մի տակի շապիկով բաւեց գնա, եթէ ոչ... ցոյց տալով հրացանի կոթը, հա տեսնում ես որ այնպէս է": Դէ արի պաշտպանուիր անզէն հայ, մինչդեռ քո ձեռքումդ գտնուած քո մէկ հատ հրացանը խլում են քեզանից. արգելում են ամենայն ինչ, մի երկաթի կտոր անգամ զոնեայ գաղաններից պաշտպանուելու:

Բախտաւոր էինք և գոհ եթէ մեզանում էլ ձերինների պէս Ճանապարհները ապահովուած լինէին, ամեն տեղ ձիաւորների պահականոցներ:

Անցեալները Վանից Երևան գնալու համար Ճամբորդները ոստիկանապետէն յատուկ յանձնարարականով գնում են Բերկրի նոյն տեղի գաւառապետէն ձիաւոր զօրքեր առնելու մինչ Բայազէտ, բայց նրանց չէ յաջողւում. ոչ գաւառապետը վստահանում է տալ և ոչ զօրքերը յանձն են առնում գնալ: Ճամբորդները մի որ այդտեղ սպասելէ գնում են Հայդէրանցիների Մուսայ աղայի մօտ և այնտեղից ուրիշ մի Հասան աղայի մօտ. երկուքն էլ գործ են դնում իրենց պատուաւոր յափշտակութիւն, հէնց իրենց վրանում, առաջինը առնում է մի ժամացոյց և վերջինը մի ռէվօլվէր, Թողունք իրենց մարդկանց ստացած պարգևները: Նրանց ուղեկցող քրդերը զինուած էին լինում Հէնրի-Մարթինի հրացաններով. երբ տեսնում են, որ հայերը զէնք չունին, իրանք են զարմանում, և ասում, եթէ դուք մեր աղաների մօտ չէիք եկել, մեր լաւ պատառներ էիք:

Այս հանգամանքներում մեր կառավարութեան բռնած ընթացքը այնքան մեղադրելու է, որ մենք թոյլ ենք տալիս մեզ նկատողութիւններ անելու. օրինակ ձիաւոր զօրքեր և թէ հետևակ կամ նրանց զօրապետները վախենում են, սարսափում են, չեն վստահանում մի քանի հոգիով Ճանապարհ ընկնել, որովհետև աւազակ քրդերի հրացանները գերազանցում են նրանց, որովհետև նրանց մօտ աւելի լաւն է գործ դրւում: Այդ զօրքերից շատերը կողոպտուեցան թէ Բայազէտի և թէ Վանի շրջակայքում, հէնց շատ մօտիկ անցեալում կողոպտուեցան մի հարիւրապետ և մի քանի կանոնաւոր զօրքեր Բայազտոյ շրջակայքում:

Ահա այսպէս է մեր պոլիցիական կառավարութեան վարուողութիւնը: Խնդիրը այնտեղ չէ, որ մի Գաղանջեան կը բանտարկուի կամ կը մեռնի, այլ դրանով մեզ զրկում են մեր արդար իրաւունքից, սպանում խեղդում են մեր զգացմունքները: Սա միթէ Օսմ. բարեգութ կառավարութեան հաճելի է. մենք տարակուսում ենք:

Եւ այս տագնապի և երերման վիճակի մէջ, մինչդեռ ամեն. Ներսէս իւր տկարութեան իւր հրաժարականի խնդրովն է զբաղուած, տեսնենք թէ Վանի և Պոլսոյ մեր Ճարտասան, հռետոր առենախօս էֆէնդիք ինչ միջոցներ պիտի խորհեն, կասկածներ մեզանից փարատելու և ազատելու անպաշտպան բանտարկեալներին:

Խոնարհաբար կը խնդրէինք օտարազգի լրագրապետներից նոյն յօդուածը արտատպելու իրենց թերթերում:

Զօհրաբ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

„Politische Corresp."-ի ասելով Վելսում իրլանդական ժողովրդի մէջ անկարգութիւններ են ծագել: Երեք գիւղեր կողոպտուած և հրդեհաձիգ են արուած, իսկ բնակիչները սպանուած:

—

„Times"-ին, Նոյեմբերի 11-ից (23) հեռագրում են Փարիզից. „Journal de Rouen"-ը հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում հիւսիսային Ֆրանսիայի Իպօրտում (Vport) խոլերայի երևալու մասին: Իպօրտի ձկնորսները այս ամառ Նիւֆաունդլէնդի եզերքներում ձկնորսութեամբ էին պարապում: Վերադառնալիս նրանց մի մասը մնաց Սեթտա (Cette) քաղաքում, Միջերկրական ծովի մօտ, որպէս զի աղէ իւր բերած տռեսկ ձուկը: Այդ աշխատութիւնը վերջացնելուց յետոյ՝ նրանք երկաթուղով վերադարձան Իպօրտ, որտեղ, նրանց գալուց անմիջապէս յետոյ, սկսան երևիլ խոլերային առաջին դէպքերը: Առաջին հիւանդացողը եղաւ եկած ձկնորսներից մինի ազգականը, որը, ինչպէս երևեցաւ, Նոյեմբերի 1-ին և 2-ին լուացել է նրանց ճերմակեղէնները: Նրանից յետոյ մեռաւ նոյն ձկնորսի եղբայրը, իսկ 16-ին հիւանդացաւ տասնամեայ մի աղջիկ, որը նրանցից մօտ էր բնակւում, և Նոյեմբերի 18-ին մեռաւ. 19-ին մեռաւ նոյն ձկնորսի մի ուրիշ ազգականը, իսկ 20-ին նրա հօրը անկողնի մէջ մեռած գտան: Ի վերջոյ, յետոյ մեռաւ դարձեալ մի 79-ամեայ կին: Առհասարակ քսան օրուայ միջոցում 11 խոլերային դէպքեր եղան, որոնցից վեցը մեռան: Այժմ Իպօրտում դեռ ևս կան երկու հիւանդներ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վիճակագրական տեղեկութիւններ Փարիզի ազգաբնակութեան մասին. Այժմ միայն տպագրուած են Փարիզի ազգաբնակութեան մասին վիճակագրական ճշգրիտ տեղեկութիւններ, որը ժողովել է Սենի նահանգապետութիւնը դեռ 1881 Թուականին: Այդ տեղեկութիւններից երևում է, որ Ֆրանսիայի մայրաքաղաքի բնակիչների Թիւը հասնում է 2,239,928 հոգու: Նրանցից 1,113,326-ը տղամարդիկ են, և 1,126,602-ը կանայք: 1876 Թուականից սկսած Փարիզի ժողովրդի Թիւը աւելացել է 251,122 հոգով: Այս քաղաքի առաջին աշխարհագիրը եղել է 1700 Թուին, երբ Փարիզում համարւում էին 720,008 բնակիչ: Փարիզում կայ ընդամենը 60,127 տուն, որոնցից 32,422-ը ունին չորս յարկից աւելի: 1881 Թուականին ամուսնացած մարդիկ կային 440,022, իսկ մարդու գնացած կանայք 446,297: Ամուսնացած տղամարդիկներից ամենաջահելը 17 տարեկան էր, իսկ մարդու գնացած ամենաջահել կինը 14 տարեկան: Փարիզում 1881 Թուականին այրի մարդ եղել է 51,735, իսկ այրի կնիկ—123,251. նրանց մէջ 2 տասնուվեց տարեկան այրի երիտասարդ կնիկ և 3 տասնութ տարեկան այրի տղամարդ: Երկարակեցութեան համար հետևեալ տեղեկութիւններն են երևան հանած. 6,386 մարդ 80 տարեկանից մեծ, 2,747-ը 84—89 տարիների մէջ. 640 հոգի 90 տար., 138-ը 95-ից աւելի. և, վերջապէս, 20 հոգի հարիւրամեայ, առաւելապէս այրի տղամարդիկներ և կանայք: Օտարազգիներ այս Թուականում եղել է Փարիզում 91,872 տղամարդիկ և 75,875 կանայք: Ամենից շատ բէլգիացիներ. նրանցից յետոյ քանակութեան կարգով գալիս են—իտալացիներ, գերմանացիներ, շվեցարացիներ, անգլիացիներ, ռուսներ, ամերիկացիներ և վերջապէս 65 հոգի չինաստանցի. աֆրիկացիներ ընդամենը—149. Փարիզում արհեստով ապրում են 540,288 տղամարդիկ և 562,205 կանայք: Առևտրով պարապում են 551,678 հոգի: Աստիճանաւորներ—66,720 հոգի. եկեղեցական պաշտօնեաներ 8,858. դատաստանատներում ամեն կարգի ծառայողների Թիւը հասնում է 16,899: Այր և կին բժիշկներ—18,301: Դպրոցներում պարապում են 9,324 տղամարդ և 12,794 կին: Ուսումնականներ, գրողներ և պուբլիցիստներ—5,684 մարդ և 5,300 կին: Անորոշ պարապմունքների տէր, փոքրիկ երեխաներ, ուսանողներ և չքաւորներ համարւում են 61,609 հոգի:

⁂

Բանաստեղծական բաղդատութիւն. Ռուս բանաստեղծ Դ. Դ. Մինաևը, ինչպէս յայտնի է, աննման է իւր սրամիտ էքսպրոմտներով (յանպատրաստից շուտով ասուած փոքրիկ ոտանաւոր): Այս ամառ գալով Կրիմ՝ նա հրաւիրուածով մի տեղ հիւր ընկաւ: Տան տիկինը, գեղեցիկ և զուարճ դէմքով մի կնիկ, Թէյ էր բաժանում հիւրերին և անփոյթ կերպով կօնֆէկտները մէկ-մէկ բերանը դնելով հալեցնում և կուլ տալիս:

Հիւրերից մէկը այս միջոցում յիշեց լեհացի բանաստեղծի—Միցկեվիչի—մի լեհացի գեղեցկուհու ուղղած հետևեալ էքսպրոմտը. „Քո սպիտակ կրծքի վերայ ընկաւ սպիտակ ձիւնի մի հատիկ և վճռեց, որ ինքն աւելի սպիտակ է, բայց և նոյն իսկ վայրկեանում խոստովանելով իւր յանդգնութիւնը՝ բարկութիւնից նա ջրատար դարձաւ": Ամենքը հիացան այս էքսպրոմտի վերայ, իսկ տան տէրը մինչև անգամ յայտնեց այն կարծիքը՝ թէ ներկայ ժամանակուայ բանաստեղծները ընդունակ չեն այդպիսի մի յաջող կօմպլիմենտ ասելու:—Ինչու համար էք դուք այդպէս կարծում,—ասաց ժպտալով Դ. Դմիտրիևիչը՝ մասամբ վիրաւորուած և ցոյց տալով տան տիկնոջ վերայ, որը շարունակ ուտում էր քաղցրեղէնը՝ նա աւելացրեց. „ձեր ամուսինը—ըղձալի է. ձեր ամուսինը—կատարելութիւն է: Նրա փոքր ու քնքուշ բերանի մէջ է ընկել վանաշաքարը (леденецъ) և... երջանկութիւնից սկսել է դանդաղաբար հալուել:"

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

23 Նոյեմբերի.

Պետերբուրգ. Այսօր կայացաւ Ֆրանկ-ռուսաց ընկերութեան գործարանում շինուած „Витязь" զրահակիր նաւի ծովը իջեցնելը, որին ներկայ էին. Թագաւոր Կայսրը, Թագաւոր Կայսրուհին, Թագաժառանգը, Կայսերական Տոհմի շատ անձինքներ, ծովային մինիստրութեան կառավարիչը և ուրիշ բարձրաստիճան անձինքներ: „Витязь"-ը, որը շինուած է 3000 ինդիկատոր ուժի պարունակութեամբ, բոլորովին յաջողեցաւ:

Ցալտա. Մեծ Իշխան Կոնստանդին Նիկոլաևիչը յանձնեց Գերման կոլոնիայի հիւանդանոցի ընկերութեանը «Այ—Նիկոլա» գետնի կտորը երկար ժամանակով օգտուելու, որտեղ գարնանը հիւանդանոցի կայարան կը կառուցուի.

Թէհրան. Անգլիական յանձնաժողովը աւղանական սահմանը որոշելու համար Մեշխեդից գնաց Սերախս, որտեղ նոյեմբերի 3-ին պէտք է միանայ նրանց հետ Հնդկաստանից եկող յանձնաժողովի անդամները:

Լոնդոն. Արտաքին գործերի մինիստրը յայտնեց լորդերի պալատում, թէ Գորդոնին գերելու մասին լուրը ճիշդ չէ, թէ Կայիրօյում նոյնպէս չեն հաւատում դրան և թէ գեներալ Ուօլսէյլը ժամանել է Դոնգօլա։

Նանտ. Երէկ խօլերայով տասը մարդ մեռաւ այստեղ. խօլերան երևացել է նոյնպէս Պեմբեֆում-Նանտայից դէպ՝ արևմուտք։ Նանտայից գնացող նաւերը Լուարա գետի գետաբերանում միօրեայ քննութեան են ենթարկվում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ.

23 Հոկտեմբերի.

Լօնդօն—$24\frac{13}{16}$, $24\frac{29}{32}$։ Համբուրգ—$210\frac{3}{4}$, 211։ Փարիզ—$260\frac{1}{2}$, 261։ Պօլուիմպերիալը—8ր., Արծաթը 1. ր. 35կ.։ Պետական բանկի 5% տոմսեր. 1-ին շրջանի—$98\frac{1}{4}$ ր., 2-րդ—97 ր.,37 կ., 3-րդ—97 ր. 75 կ., 4-րդ—97 ր. 37 կ., 5-րդ—$97\frac{1}{4}$ ր.։ Արևել. փոխառութ. 100 և 1000 ռուբ. 5% տոմսեր. 1-ին շրջանի—94 ր. 87 կ., 2-րդ—94 ր. 87 կ., 3-րդ—94 ր. 87 կ. Վիճակահանութ. տանող 5% տոմսեր. 1-ին շրջանի—$220\frac{1}{2}$ ր., 2-րդ—208 ր.։ Նոր փոխառութիւնը—142 ր.։ Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւանդանոցի դիրեկտոր Գ. Վերմիշովը այսու յայտարարում է, որ Թիֆլիսի քաղաքացիների հիմնած երթևեկ հիւանդների համար հիւանդանոցում մտցնվում է օրապահութիւն պ. պ. բժիշկներից և մանկաբարձուհիներից

ԲԺԻՇԿՆԵՐ.

Յարութիւնեանց,—երկուշաբթի, հինգշաբթի և կիւրակի.
Կօրօնա,—երեքշաբթի և շաբաթ.
Մելիք-Փարսադանով,—չորեքշաբթի և ուրբաթ.

Մանկաբարձուհիներ.

Ֆիլչակով,—երեքշաբթի.
Բաղինով,—երկուշաբթի և ուրբաթ.
Ստեփանով,—չորեքշաբթի և շաբաթ։
Լօկշ,—հինգշաբթի և կիւրակի.

Հիւանդանոցի դիրեկտոր՝
կօլլեժսկի Սօվետնիկ Վերմիշով.

Հասայ ԵՐԵՒԱՆ և կը մնամ մինչև ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ը։ Հասցէս այսպէս գրել՝ դերասան ՍԱՖՐԱԶԵԱՆԻՆ
ԵՐԵՒԱՆՈՒՄ։

5—3

Պատրաստ եմ տներում դասեր տալու հայոց գրաբառ և աշխարհաբառ լեզուից, պատմութիւնից, Հայաստանի աշխարհագրութիւնից։

Ցանկացողներին խնդրում եմ դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

8—6

ՄԵՐ ՖԻՐՄԱՅԻ ՄԷՋ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԷՋ,
ՈՐՈՎ ՆԱ ԱՌԱՆՁՆԱՊԷՍ ԴԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է,

ՊՐՕՎԱՆՍԻ ԻՒՂԸ

Գրաւում է, իւր նշանակութեամբը առաջին տեղերից մինը։ Արդէն մի քանի տարի շարունակ, մեր միջոցովը և պատուէրովը առանձին հոգացողութեամբ պատրաստվում է նա Նիցցայում, որ իւր արտակարգ նուրբ համի պատճառով ճշմարիտ հասկացողները և գնահատողները ամեն տեղ նրան նախադասում են։ Առաջարկումենք ամեն տեղ պահանջել Պրօվանսի իւղ ՄԵՐ ՖԻՐՄԱՅԻ ԵԱՐԼԻԿՈՎ.

Ռ. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿ. ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ.

Գաւառներում. բոլոր դեղավաճառանոցներում և կօլօնեալ խանութներում։

(Ц. 6) 5—3.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՀԵՍՏ

Փ. Պ. ՌՕԴՕԿԱՆԱԿԻ

Օդեսայի առևտրական տան

Արդիւնաբերում և վաճառում է Օդեսայի և Սեւաստօպօլի իւր սեփական գործարաններից շոգեշարժ աղօրիքներից. ԱԼԻՒՐ, Պեռլովի կրուպա, շաքար. զանազան տեսակ իւղեր և գոյներ. Թել, մետաքս և կտաւ, նոյնպէս և պագօշ. Սեւաստօպօլի Կաշիի գործարանից։

Գործակալութիւնը գտնվում է Դվօրցովի փողոցի վերայ, նախկին Արծրունու քարվանսարայում, № 108

10—4

ՅԱՅՏՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՍԷՅԵԱԴԻ (Կապիտան Պետրոս Մադաթեանց) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ընտիր թղթի վերայ մաքուր տպուած I, II և III մասերը միասին լոյս տեսաւ և արդէն վաճառվում է Բագվում իմ սեպհական տպարանում և Թիֆլիսի գրավաճառանոցներում. գինն է 1 ռ. 20 կ.։

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.—Въ Баку, въ Типографію Александра Гасабова.

30—6

ՀԻՆԳ ՄԱՔՈՒՐ ՍԵՆԵԱԿ իւր բոլոր յարմարութիւններով վարձու են տրվում. ՎԵԼԻԱՄԻՆՕՎՍԿԻ փողոց, № 34։

6—3

ՆՈՐ ՊԱՀԵՍՏԻ ԲԱՑՈՒՄՆ

ՀԱՅԻ ՍՊԻՐՏԻ

ԵՒ

ԶՏԱԾ ՕՂԻՆԵՐԻ.

Վլադիկավկազեան Սվետտօ-Տրօիցկի տոհմական պատուաւոր քաղաքացի Իվան Ազամովիչ Պօրակովի և Դաւիթ Զախարովիչ Սարաջեվի ցքահանութեան գործարանի գրասենեակը այսու յայտարարում է, որ հոկտեմբեր ամսի 1-ից բացուած է Թիֆլիսում, Թամամշովի քարվանսարայում, Երևանեան հրապարակի վերայ, Ալելովի գրասենեակի շարքում, հայի սպիրտի և զտած օղիների պահեստ։

Պահեստում կան մեծ քանակութեամբ հայի սպիրտ. սուրճից, լեկեօրից և պարզ ալկօհոլից, նոյնպէս և օղիներ՝ զտած, ճաշի համար, մաքրած և թագաւորական կնքուած բարձր յատկութեան։

Յիշեալ պահեստի սպիրտի և զտած օղիների մանրավաճառ լինում է Թիֆլիսում հետևեալ խանութներում.—Յակօբովի, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Մուխրանսկու տանը Միրզախանովի, Երևանեան հրապարակի վերայ, Իզմիրովի տանը, և Շաքիևի, Սօլօլակում, Ամբատովի տանը, 1 վեդրանոց, 1/2 վեդ., 1/4 վեդ., 1/10 վեդ., 1/16 վեդ., 1/20 վեդ., 1/40 վեդրանոց անօթներում, պահեստի եարլիկով և կնիքով։ «Մարկայ». «Վլադիկավկազեան Սվետտօ-Տրօիցկի ցքահանութեան գործարան, Թիֆլիսի պահեստից»։ Նոյն տեղերում մանրավաճառ կլինի մինչև 3 վեդրօ 1, 1/2 և 1/4 վեդրանոց անօթներում, պահեստի գնովը։ Գները չափաւոր են. սպիրտի և օղիների պատուէրները պահեստը ինքն է հասցնում տներին։

Օտարաքաղաքացիք իրենց պահանջներով դիմում են հետևեալ հասցէով. Թիֆլիս, Իվ. Ազ. Պօրակովի և Դաւ. Զախ. Սարաջեվի հայի սպիրտի պահեստը, Երևանեան հրապարակի վերայ։

10—6.



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԶԻՆԳԵՐԻ

Նիւ-Եօրկում

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱԿ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏՈՒՄ, ՄԻՐԻՄԱՆՕՎԻ ՏԱՆ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ

Որը արժանացել է Ամստերդամի համաշխարհական հանդէսին 1883-ին

Միակ ամենաբարձր պարգևը պատուաւոր դիպլոմ

Մօտ օրերում ստացայ մեծ քանակութեամբ և աւելի կատարելագործուած զանազան տեսակ արհեստաւորների և ընտանեկան կարեմեքենաներ իրենց օգնական նոր գործիքներով և նոր ոտերով, որոնք առանց աղմուկի թեթևութեամբ բանում են, այնպէս որ ամենաթոյլ մարդիկ և ծերունիներն անգամ, առանց այժ գործ դնելու կարող են գործածել։ Այս մեքենաներից 1883 թ. ԾԱԽՈՒԵՑԱՒ մօտ 700,000 հատ, այնպէս որ անցեալ տարում աւելի շատ ծախուեցաւ քան թէ 1882 թուականում։ Սա ամենալաւ ապացոյցն է թէ ինչ լաւ յատկութիւն ունին ԶԻՆԳԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ։

Նախազգուշութիւն. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ համբաւ ունին, որովհետև իրենց գեղեցիկ յատկութիւններով և ամրութեամբը զմայլեցնում են ամենքին և հենց այդ է պատճառը, որ ուրիշ գործարանատէրեր կեղծում են և Զինգերի իսկական մեքենայի անունով ծախում։ Այդ պատճառով անհրաժեշտ է դարձնել ձեր ուշադրութիւնը նրա վերայ, որ Զինգերի իսկական կարեմեքենաներից իւրաքանչիւրը կրելով անգլիական լեզուով «Մանուֆակտուրական Ընկերութեան Զինգերի» ֆիրման մեքենայի կոթի և մամուլի վերայ դրոշմուած են վերը դրած գործարանական մարկաները։ Զինգերի իսկական և օգտաւէտ կարեմեքենաները որ իւրաքանչիւր մարդ կարողանայ հեշտութեամբ ձեռք բերել, գնողները կարող են եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել, այն է՝ շաբաթը 1 ր. 50 կ. կամ ժամանակմիջոց ստանալ դրամը վճարելու համար, առանց [illegible] գինը բարձրացնելու։ Հին մեքենան մաղազինում կարելի է փոխել։ Մեքենաները ունին նոյնպէս իրենց պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս, մեքենայի իւղ և այլն և այլն։

ԹԻՖԼԻՍ, Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

Բաժանմունքներ. ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ, Ալէքսանդրեան փողոցի վերայ, տուն Չէրէկովի, բուլվարի հանդէպ։ ԲԱԳՈՒԻ մէջ, Միքայէլեան փողոց, տուն Միրզա-Ասադովի։ ԲԱԹՈՒՄ, Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-օղլի։ Այս մեքենաների մշտական պահեստներ գտնվում են նաև Կարս, Ելիսաւէտօպօլ, Ալէքսանդրապօլ, Շուշի, Պետրովսկ և Ախալքալաք քաղաքներում,

50—35

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го Октября 1884 г.
Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12.